

8. ՕԺԱՎԸ

Մին մարթ քյընըմ ա ճոր խըմի, տրեսնըմ ա ճորը շատ ա ցորտ-ցորտ։

Ասըմ ա.— Ա ճոր, էտ հի՞նչ սառնը ըս, էտ հի՞նչ օժավ ըս...

Էտ ճորըն ասըմ ա.— Թա օժավ ըմ, խե՞ յա երգյինքյը ինձանա ճոր քաշըմ։

Էտ մարթն ասըմ ա.— Ա՛ երգյինքյ, էտ հի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա ինձանա թոռ եր տրեռնըմ։

— Ա՛ թոռ, էտ հիշ՞քան օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա ինձանա խոտը կընանչըմ։

— Ա՛ խոտ, էտ հիշքա՞ն օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա վրեխճարը ինձ օտըմ։

— Ա՛ վրեխճար, էտ ի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա ղասաբը ինձ մորթըմ։

— Ա՛ ղասաբ, էտ հի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա մոկնը կընգանըս շորերը օտըմ։

— Ա՛ մոկնը, էտ հի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա կատուն ինձ օտըմ։

— Ա՛ կատու, էտ հի՞շքան օժավ ըս։

— Հա՛, օժավ ըմ, փափուկ տրեղի տոր ըմ, մրկներին ահրն ըմ։